

2.4. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2.4.1. Ազգային հաշիվների համակարգ

Հայաստանում ազգային հաշիվների հաշվարկի մեթոդաբանությունը հիմնված է Արժույթի միջազգային հիմնադրամի, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Եվրոպական համագործակցության հանձնաժողովի ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից համատեղ մշակված և որպես միջազգային ստանդարտ ընդունված սկզբունքների և մեթոդաբանության «Ազգային հաշիվների համակարգ-93» վերանայված տարբերակով, ինչպես նաև «Եվրոպական հաշիվների համակարգ-95» (ԵՀՀ-95) միջազգային մեթոդաբանությունների հիմքերի վրա:

Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) կազմման առումով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Իրականացվել են Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և այլ մակրոտնտեսական ցուցանիշների ամբողջ տնտեսության, ինչպես նաև կառուցվածքային հատվածների և տնտեսական գործունեության տեսակների մակարդակով վիճակագրության վարման, հաշիվների կազմման աշխատանքներ:

Իրականացվել է ազգային հարստության բաղադրիչների վիճակագրության վարում և կատարելագործում, մասնավորապես կազմվել է վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների և պետական հիմնարկների հիմնական միջոցների հաշվեկշիռը ըստ հաշվետու տարիների (հաշվեկշռային և մնացորդային արժեքներով) ըստ տնտեսական գործունեության տեսակների:

Շարունակվել են ազգային հաշիվներում տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրման աշխատանքները, և անցում է կատարվել ազգային հաշիվներում կիրառվող՝ Ժողովրդական տնտեսության ճյուղերի նախկին համամիութենական դասակարգումից Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին:

Ազգային հաշիվների հիմնական ցուցանիշները, այդ թվում ՀՆԱ-ն, սկսած 2007թ. հունվարից հրապարակվում են ըստ ԵՀՀ-95 ձեռնարկով տրվող խմբավորումների ձևաչափերի. Ա3 և Ա6՝ ամսական պարբերականությամբ, իսկ Ա17՝ եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

ԵՀՀ-95-ի պահանջներին առավել համապատասխանեցնելու նպատակով, ինչպես նաև ելնելով համադրելի ժամանակային շարքերի անհրաժեշտությունից և հաշվի առնելով վիճակագրական տեղեկատվության հիմնական սպառողների առաջարկությունները, իրականացվել է նաև 2000-2003թթ. արտադրության հաշվի՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի և ՀՆԱ-ի օգտագործման եռամսյակային ցուցանիշների վերագնահատում (հետհաշվարկ), որոնք տեղ են գտել «Հայաստանի ազգային հաշիվները 2009» վիճակագրական ժողովածուի մեջ:

Շարունակվել են ազգային հաշիվների ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ըստ ենթահատվածների ավելացված արժեքի (արտադրական եղանակով) տարեկան ծավալների հաշվարկների մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Ազգային հաշիվների համակարգի տեղեկատվական բազայի ընդլայնման և կատարելագործման, «Ծախսեր - թողարկում» աղյուսակների, մասնավորապես, «Ռեսուրսներ - օգտագործում» աղյուսակների ձևաչափերի մշակման և ներդրման, ինչպես նաև ազգային հաշիվների տվյալների փոխհամաձայնեցվածության ապահովման նպատակով իրականացվել են նաև «Կազմակերպությունների օգտագործած արտադրանքի (ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների) և պաշարների վերաբերյալ, ինչպես նաև «Առևտրային հավելագնի» և «Տրանսպորտային հավելագնի» վերաբերյալ միանվագ փորձնական հետազոտություններ և դրանց արդյունքների հիման վրա՝ 2006թ.-ի «Ռեսուրսներ - օգտագործում» աղյուսակների փորձնական կազմման աշխատանքներ:

Շարունակվել են «Չդիտարկվող տնտեսության» չափերի գնահատման մեթոդաբանության կատարելագործման նպատակով իրականացվող միջոցառումները, մասնավորապես իրականացվել է 2009թ.-ին «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությանը» կից «ոչ ֆորմալ» հատվածի հետազոտություն (Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ)՝ ազգային հաշիվներում դրանց չափերի գնահատականների արդիականացման նպատակով:

Իրականացվել են միջոցառումներ ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ:

Հրապարակվել են Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների բաղադրիչները ներկայացնող վիճակագրական ժողովածուները՝ հայերեն և ռուսերեն, իսկ 2009թ.-ի համար՝ հայերեն և անգլերեն (տարեկան և եռամսյակային կտրվածքով):

2.4.2. Արդյունաբերություն

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ամբողջական ներդրման նպատակով, շարունակվել են վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված, ինչպես նաև նոր ընդգրկվող արդյունաբերական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների ծածկագրման և վերածածկագրման աշխատանքները:

Ամբողջովին ավարտվել են ինչպես արտադրատեսակների անվանումների ու դրանց չափի միավորների՝ «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» ազգային դասակարգչին համապատասխանեցման, այնպես և հաշվառվող արտադրատեսակների վերածածկագրման աշխատանքները:

Արդյունաբերությունը բնութագրող ցուցանիշների ամբողջականության և հաշվարկների կատարելագործման նկատառումներով պայմանավորված, որոշ արտադրատեսակների (հաց, պանիր) «չդիտարկվող» (ուղղակի վիճակագրական գործիքների կիրառման տեսանկյունով՝ հաշվարկների որոշակի խնդիրներ առաջացնող) դաշտի գնահատման նպատակով կատարելագործվել է համապատասխան մեթոդաբանությունը, ըստ այդմ, տարանջատելով նաև համապատասխան տեղեկատվական աղբյուրները՝ տնային տնտեսությունների հետազոտությունները և կազմակերպությունների ընտրանքային հետազոտությունները:

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի՝ «Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում» բաժնին համապատասխանող ցուցանիշների ամբողջականության ապահովման նկատառումով պայմանավորված, համատեղ աշխատանքներ են իրականացվել գազի և ջրի արտադրության ու բաշխման և կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ՝ ծավալների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության առկայությունն ապահովման նպատակով:

Վիճակագրական գործիքակազմի արդիականացման և կիրառվող դասակարգիչներին համապատասխանեցման նպատակով 2007թ. ընթացքում վերանայվել են «Արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-ԱԲՏ (ամսական և տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները, կատարելագործվել են տեղեկատվության հավաքագրման, մշակման և ներկայացման մեթոդներն ու ձևերը, այդ թվում՝ ցուցանիշների հաշվարկման համար հաշվողական տեխնիկայի, տեղեկատվական ցանցերի և համակարգչային ծրագրերի լայն օգտագործմամբ: Նշված աշխատանքների իրականացումը հնարավորություն է ընձեռել զգալիորեն նվազեցնել համապատասխան աշխատանքների կատարման (մշակման) ժամկետները:

2009թ. հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը, 2009» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է արդյունաբերական արտադրանքի ծավալի (ըստ գործունեության տեսակների), արդյունաբերական արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրության, նյութատեխնիկական բազայի և արդյունաբերության գործունեությունը բնութագրող այլ ցուցանիշների դինամիկան 2004-2008թթ. ժամանակահատվածի կտրվածքով:

2.4.3. Գյուղատնտեսություն

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների և հասկացությունների ներդրման նպատակով 2008 և 2009թթ. ընթացքում վերանայվել և փոփոխությունների են ենթարկվել գյուղատնտեսության վիճակագրությանն առնչվող համապատասխան վիճակագրական հաշվետվական ձևերն ու դրանց լրացման հրահանգները: Մասնավորապես, տարանջատվել են պետական վիճակագրական հաշվետվական ձևերն ըստ դրանց ներկայացնողների՝ գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների (ներկայացնում են պետական վիճակագրական հաշվետվություն) և համայնքների (ներկայացնում են պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն):

Հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար աշխատանքներ են տարվել գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտի արդիականացման ուղղությամբ: Արդյունքում ձևավորվել է նոր ընտրանքային դաշտ, որում ընդգրկված են 187 գյուղական համայնք, յուրաքանչյուր համայնքում 40 գյուղացիական տնտեսություն, ընդամենն ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկելով 7638 գյուղացիական տնտեսություն: Միաժամանակ հաշվի առնելով բուսաբուծական և անասնաբուծական մթերքի արտադրության առանձնահատկությունները, ճշգրտվել և

արդիականացվել են վերը նշված ընտրանքային դաշտի միջոցով հավաքագրված տվյալների՝ արտադրության ծավալների, հաշվարկման մեխանիզմներն ու մեթոդաբանությունը:

2008թ. նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության «Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր» ծրագրի շրջանակում 2008թ. ապրիլ ամսին անցկացվել է գյուղատնտեսության ընտրանքային հետազոտություն՝ գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ձևավորման նպատակով: Հետազոտության առջև խնդիր էր դրվել դաշտային փորձաքննության ենթարկել հարցաթերթը, պարզաբանելու դրանում ներառված ցուցանիշների ամբողջականությունը գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ձևավորման համար, դրանց մատչելիությունն ու ընկալունակությունը հարցվողների կողմից: Սույն հետազոտությունը հնարավորություն ընձեռեց ուսումնասիրել և ընդլայնել գյուղատնտեսության վիճակագրության վարման համար անհրաժեշտ լրացուցիչ ցուցանիշների համակարգը, ինչպես նաև կատարելագործել այդ ցուցանիշների հաշվարկման գործիքակազմն ու մեթոդաբանությունը: Միաժամանակ, մշակվել և փորձարկվել է Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ձևավորման համար անհրաժեշտ համակարգչային ծրագիր: Արդյունքների հիման վրա պատրաստվել և հրատարակվել է գեկույց (հայերեն և անգլերեն):

2.4.4. Շինարարություն

Շինարարության վիճակագրությունում Տնտեսական գործունեության տեսակների (խմբ.2) և Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգիչների սկզբունքների և հասկացությունների ներդրման նպատակով՝ 2009թ. վերանայվել են շինարարության վիճակագրությանն առնչվող թվով 3 պետական վիճակագրական հաշվետվական ձևեր և դրանց լրացման հրահանգներ: Հաշվետվական ձևերի փոփոխմամբ պայմանավորված և վիճակագրական տվյալների մշակման և ամփոփման աշխատանքների մեքենայացման նպատակով՝ մշակվել են նաև համակարգչային նոր ծրագրեր:

Վիճակագրական ցուցանիշների արժանահավատության բարձրացման, համընդգրկունության ապահովման ու հաշվարկային մեթոդաբանությունների կատարելագործման և որպես դրա հետևանք ու նախապայման՝ բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների ամբողջական բացահայտման ու արտացոլման նկատառումներով պայմանավորված՝ շարունակվել են անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկումները (շրջագայությունների միջոցով)՝ ձևավորելով ու պարբերաբար արդիականացնելով այդ շինարարական օբյեկտների համացանկը:

Շարունակվել են աշխատանքները շինարարության վիճակագրության տեղեկատվական բազաների առավել ամբողջականացման նպատակով ռեգիստրների ձևավորման և հաշվառման ցանցի արդիականացման ուղղությամբ:

Ծառայության կողմից SUՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն-10» նախագծի «Շինարարության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում 2008թ. մայիսին անց է կացվել քաղաքացիների կողմից իրականացվող անհատական բնակելի շենքերի շինարարության ընտրանքային հետազոտություն, որով խնդիր էր դրվել ուսումնասիրել և ընդլայնել բնակարանային շինարարության վիճակագրության համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը: Միաժամանակ, սույն հետազոտությունը նաև հնարավորություն կընձեռի ոչ միայն համալրել բնակարանային շինարարության վիճակագրությանն անհրաժեշտ լրացուցիչ ցուցանիշներով, այլև կատարելագործել այդ ցուցանիշների հաշվարկման գործիքակազմն ու մեթոդաբանությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հունիսի 12-ի թիվ 641-Ն որոշմամբ հաստատված «1988թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների ծրագրի» հավելվածի 6-րդ կետի համաձայն հրապարակվել է «Աղետի գոտին երեկ և այսօր» վիճակագրական ժողովածուն, որտեղ ներկայացված են վիճակագրական տվյալներ 1989-2008թթ. աղետի գոտու շինարարության վիճակի վերաբերյալ, մասնավորապես, հիմնական միջոցների գործարկման, շինարարության և շինմոնտաժային աշխատանքների ծավալների, բնակելի շենքերի և սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների գործարկման վերաբերյալ ըստ ֆինանսավորման աղբյուրների, ինչպես նաև մարզերով:

2.4.5. Տրանսպորտ և կապ

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների, հասկացությունների և գործունեության տեսակների ամբողջական ու համապարփակ ներդրման, ինչպես նաև Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրման նախադրյալների ձևավորման նպատակով՝ 2007, 2008 և 2009թթ.-ին վերանայվել են տրանսպորտի և կապի վիճակագրությանն առնչվող թվով 15 պետական վիճակագրական հաշվետվական ձևեր և դրանց լրացման հրահանգներ: Վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններով ծանրաբեռնվածության նվազեցման, ցուցանիշների կրկնորոշությունների բացառման և տեղեկատվական հոսքերի կանոնակագման նպատակով, 2009թ. ընթացքում տրանսպորտի վիճակագրությանն առնչվող պետական վիճակագրական չորս հաշվետվական ձևեր միավորվել են երկու պետական վիճակագրական հաշվետվական ձևերում:

Տրանսպորտի և կապի վերաբերյալ համապատասխան վիճակագրական տեղեկատվության ապահովման նպատակով, շարունակվել են համապատասխան ոլորտների վարչական վիճակագրություն իրականացնող պետական լիազոր մարմինների հետ համատեղ աշխատանքները:

2009թ. հրատարակվել է «Հայաստանի Հանրապետության տրանսպորտը և կապը, 2009» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և տրանսպորտի այլ տեսակների, տրանսպորտային ենթակառուցվածքների, տրանսպորտային ծառայությունների հասույթների և ծախսերի, հիմնական միջոցների, ճանապարհատրանսպորտային

պատահարների, կապի համակարգի և այլ ցուցանիշների դինամիկան 2004-2008թթ. ժամանակահատվածի կտրվածքով:

2.4.6. Առևտուր և այլ ծառայություններ

Տնտեսական գործունեության տեսակների (խմբ.2) և Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգիչների ներդրմամբ պայմանավորված՝ 2009թ. արդիականացվել են առևտրի և այլ ծառայությունների վիճակագրությանն առնչվող թվով 3 պետական վիճակագրական հաշվետվություններ և դրանց լրացման հրահանգներ: Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ամբողջական ներդրմամբ, պայմանավորված վերածածկագրվել են մոնիտորինգում առկա և նոր ընդգրկված կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակները: Որպես նշվածի հետևանք, մշակվել և ներդրվել են նաև ցուցանիշների մշակման և ամփոփման համար անհրաժեշտ համակարգչային նոր ծրագրեր:

Մանրածախ առևտրի շրջանառության ամբողջականության ապահովման և արժանահավատության բարձրացման նկատառումներով պայմանավորված պարբերաբար իրականացվել են հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաների ընտրանքային դիտարկումներ՝ ըստ ապրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի օրական ապրանքաշրջանառության ծավալի: Ստացված արդյունքներն այնուհետ կիրառվել են առևտրի վիճակագրության գործիքակազմի ու մեթոդաբանության կատարելագործման համար: Դրան զուգահեռ, շարունակվել են աշխատանքներն առևտրի և այլ ծառայությունների ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտի արդիականացման ուղղությամբ:

2007թ. հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության առևտուրը և ծառայությունները, 2002-2006» վիճակագրական ժողովածուն, որտեղ արտացոլված են առևտրի և այլ ծառայությունների ոլորտները բնութագրող հիմնական ցուցանիշներն (մասնավորապես, մանրածախ և մեծածախ առևտրի շրջանառությունը, ավտոմեքենաների առևտուրը, ծառայությունների ծավալներն ըստ տեսակների և այլն)՝ ըստ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի:

2.4.7. Գներ և սակագներ

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների և հասկացությունների ներդրման նպատակով, իրականացվել է արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործում. վերանայվել և կատարվել է հետազոտվող բազային արդյունաբերական կազմակերպությունների ընտրանք: 2009թ. հունվարից սկսած, իրականացվել են գների ինդեքսների հաշվարկներ՝ Տնտեսական գործունեության տեսակների և Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգիչների կիրառմամբ: Միաժամանակ, Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ

խմբագրության կիրառմամբ պայմանավորված վերանայվել է գների ինդեքսների հաշվարկման կարգը, գների դիտարկման հաշվետվական ձևը և լրացման հրահանգը: Իրականացվել է դիտարկվող արտադրատեսակների վերակողավորում՝ դասակարգչի նոր խմբագրությանը համապատասխան:

Սպառողական գների ինդեքսների (ՄԳԻ) հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման նկատառումներով, 2009 թվականի հունվարից վերանայվել ու համալրվել են դիտարկման «գամբյուղը» ներկայացնող ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների կազմն ու կառուցվածքը: Սպառողական գամբյուղում լրացուցիչ ներառվել է 31 ապրանք-ծառայություն-ներկայացուցիչ, դրանց ընդհանուր թիվը հասցնելով 591-ի: Ըստ այդմ, կատարվել են նաև ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների տեխնիկական բնութագրերի՝ չափման միավորի, մակնիշի և այլ չափանիշների փոփոխություններ ու ճշգրտումներ: Ընդհանուր առմամբ, սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս դիտարկվել, գրանցվել և մշակվել է շուրջ 240000 միավոր գնային տվյալ: Սպառողական գների և գների ինդեքսների վերաբերյալ տվյալներն ամփոփվել են ըստ հանրապետության և 11 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 470 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչներով:

Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտի պահանջներին համապատասխան վերանայվել է ինտերնետային կայքէջում զետեղված սպառողական և արտադրողների գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանությունը 3 լեզուներով (հայերեն, անգլերեն, ռուսերեն):

Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների տարածման միջազգային հատուկ ստանդարտի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխանության նպատակով Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների կողմից 2008թ. ապրիլին իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում ՄԳԻ-ի և արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների մեթոդաբանության փորձաքննություն և արժանացել փորձագետների բարձր գնահատականին:

Գյուղատնտեսական մթերքի իրացման ու արտադրության միջոցների գնման գների, ծավալների մասին գյուղացիական տնտեսությունների ընտրանքային հետազոտման միջոցով հավաքագրվող տեղեկատվության արժանահավատությունն ու ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով ընդլայնվել է գյուղատնտեսության ոլորտում գների դիտարկման դաշտը՝ 200 գյուղական համայնքների փոխարեն հետազոտելով 201 գյուղական համայնք հետազոտվող գյուղացիական տնտեսությունների քանակը 7600-ից հասցնելով 7638-ի (յուրաքանչյուր գյուղական համայնքում հետազոտելով 38 գյուղացիական տնտեսություն): Ստացված տվյալներն օգտագործվել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման (ըստ հանրապետության, իրացման 3 ուղղությունների, ապրանքային խմբերի և հետազոտվող 61 անվանում մթերքի), ինչպես նաև գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման (ըստ հանրապետության, ապրանքային խմբերի և հետազոտվող 92 անվանում արտադրության միջոցների) գների ինդեքսների ամսական հաշվարկների իրականացման նպատակներով:

Արտաքին առևտրի (ներմուծման, արտահանման) գների ինդեքսների գծով իրականացվել է մեթոդաբանության կատարելագործում՝ եռամսյակային

պարբերականությունից անցում կատարելով ամսական կտրվածքով ինդեքսների հաշվարկման: 2007թ.-ից իրականացվում է ամսական պարբերականությամբ գների ինդեքսների հաշվարկ 3 հայտանիշներով՝ ըստ բոլոր երկրների, Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների և ոչ ԱՊՀ երկրների: Միաժամանակ, «Ոչ ԱՊՀ երկրներ» խմբից իրականացվում է գների ինդեքսների հաշվարկ ըստ Եվրամիության երկրների:

2005թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրով ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման աշխատանքների վերջնական արդյունքներն ամփոփվել են Համաշխարհային բանկի կողմից և 2008թ.-ին հրապարակվել ժողովածուի տեսքով, որտեղ արտացոլվել են աշխարհի 146 երկրների, այդ թվում՝ Հայաստանի գլոբալ համադրումների արդյունքները («Global Purchasing Power Parities and Real Expenditures, 2005 International Comparison Program»):

Ծառայության նախաձեռնությամբ, փոխադարձ համաձայնությամբ Ռուսաստանի Դաշնության վիճակագրության դաշնային ծառայության և Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության հետ, ինչպես ԱՊՀ, այնպես էլ եվրոպական և աշխարհի այլ երկրների մասնակցությամբ 2008թ. տվյալներով ՀՆԱ-ի և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային համադրումների ծրագրի իրականացման նպատակով կազմակերպվել ու իրականացվել է սպառողական գների (սակագների) դիտարկման միջին գների հաշվարկման մեծածավալ աշխատանք: Հավաքագրված և ամփոփված շուրջ 2300 անվանում սպառողական ապրանք-ծառայությունների, 300 անվանում ներդրումային ապրանքների, շինարարության առանձին բաղադրատարրերի և շինանյութերի գնային տեղեկատվությունը, ինչպես նաև ոչ շուկայական ծառայությունների քանակային և գնային ցուցանիշները, ՀՆԱ-ի բաղադրատարրերի հաշվարկները և դրանք տրամադրվել (միջին տարեկան ցուցանիշները), Ռուսաստանի Դաշնության վիճակագրության դաշնային ծառայությանը, որն էլ այդ ծրագրի շրջանակներում իրականացնում է ԱՊՀ տարածաշրջանում աշխատանքների համակարգումը և տվյալների ամփոփումը: Գլոբալ առումով միջազգային համադրումների ծրագրի համակարգումը և հաշվարկների իրականացումը կատարվում է Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության կողմից Եվրոստատի հետ համատեղ: Վերջնական արդյունքների ամփոփումը և հրապարակումը նախատեսված է 2010 թվականին:

Ազգային հաշիվներում, որպես դեֆլյատորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ), տարեկան կտրվածքներով: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության մակրոցուցանիշների վերահաշվարկման, մասնավորապես ՀՆԱ-ն հաստատուն գներով հաշվարկելու համար իրականացվել է 2005թ. նկատմամբ 2005-2008թթ. եռամսյակային գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ ըստ ՀՆԱ-ի առանձին բաղադրատարրերի:

2.4.8. Աշխատանքի շուկա

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից առաջադրվող սահմանումների, հասկացությունների և դասակարգումների ներդրման, ինչպես նաև գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցման նկատառումներով պայմանավորված 2009թ. վերանայվել են աշխատանքի վիճակագրության վիճակագրական դիտարկման փաստաթղթերը և դրանց լրացման հրահանգները: Մասնավորապես, վերանայվել են «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (ամսական) և (տարեկան) հաշվետվական ձևերը և դրանց լրացման հրահանգները, «Աշխատանքի վիճակագրության վերաբերյալ մեթոդական ցուցումները», «Առևտրային փոքր և գերփոքր կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը: Միաժամանակ, տեղեկատվության մշակման համակարգչային ծրագրային գործիքի կատարելագործման և հաշվետվություն ներկայացնող կազմակերպությունների ծանրաբեռնվածությունը հնարավորինս նվազեցնելու նկատառումներից ելնելով, կրճատվել են թվով 3 հաշվետվական ձևեր:

Շարունակվել են վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների համախմբի արդիականացման ու վերջիններիս կողմից իրականացվող գործունեության տեսակների ծածկագրման ու վերածածկագրման աշխատանքները: Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի կիրառմամբ պայմանավորված համապատասխան վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների հետ իրականացված համատեղ աշխատանքի արդյունքում ձևավորվել և արդիականացվել են վիճակագրական տեղեկություններ տրամադրողների էլեկտրոնային բազաները, բարձրացել է հավաքագրվող տվյալների ներկայացման օպերատիվությունն ու որակը: Որպես նշվածի հետևանք և նախապայման, հիմնովին նորացվել են ամսական, եռամսյակային տվյալների մուտքագրման, տրամաբանական ստուգման, էլքային աղյուսակների ստացման ալգորիթմները և համակարգչային ծրագրերը: Արդյունքում ընդլայնվել է էլքային աղյուսակների ցանկը, ցուցանիշների դեգադրեգացման աստիճանը՝ հավաքագրվող ցուցանիշների համախումբը հնարավորինս ամփոփելով նաև մարզային, տարածաշրջանային, գյուղ-քաղաք, գենդերային բաշխվածությամբ:

Շարունակվել են աշխատուժի ընտրանքային հետազոտությունները, որոնք ներառել են տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունները (աշխատուժի դիտարկումներ են իրականացվել տնային տնտեսությունների կենսամակարդակի 2007-2009թթ. հետազոտությունների շրջանակում) ու մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող կամակերպությունների ընտրանքային հետազոտությունները (տարեկան պարբերականությամբ):

ՏԱՍԻՍ ծրագրի «Վիճակագրություն-10» պայմանագրի «Աշխատանքի շուկայի վիճակագրություն» բաղադրիչի ներքո 2008թ. օգոստոսին հանրապետության 11 մարզերի 40 քաղաքային և 44 գյուղական բնակավայրերի 2000 տնային տնտեսություններում իրականացվել է աշխատուժի հետազոտություն՝ ոչ ֆորմալ հատվածի զբաղվածության խորացված ուսումնասիրությամբ, որի արդյունքների հիման վրա հայերեն և անգլերեն

լեզուներով հրապարակվել է «Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում, 2008թ.» գեկույց-հաշվետվությունը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտության շրջանակում 2009թ. ընթացքում հանրապետության 11 մարզերի 44 քաղաքային և 263 գյուղական բնակավայրերի 7872 տնային տնտեսություններում իրականացվել է ոչ ֆորմալ հատվածի հետազոտություն, որի արդյունքները կամփոփվեն 2010թ.:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ու Եվրոսատի միջազգային համադրման ծրագրի շրջանակում, 2008թ. գնային հարաբերությունների կազմման և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման նպատակով 2009թ.-ին պետական կառավարման ոլորտի 25 հիմնարկներից հավաքագրվել, մշակվել և ամփոփվել է ըստ զբաղմունքի տեսակների վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում ամսական պարբերականությամբ ներկայացվել են Կայուն զարգացման ծրագրի մոնիթորինգային ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ աշխատանքի վիճակագրության գծով մի շարք բազային ցուցանիշներ:

2007 և 2008թթ. հրապարակվել են «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուները՝ հայերեն, իսկ 2009թ.-ին՝ նաև անգլերեն: